«Արմենիա» Միջազգային Օդանավակայաններ» ՓԲԸ Գնումների

գործընթացի իրականացման կարգի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Արմենիա» Միջազգային Օդանավակայաններ» Փակ բաժնետիրական ընկերության կողմից դիզելային վառելիքի և ավտոմոբիլային բենզինի ձեռքբերման նպատակով կազմակերպվող մրցույթի

1. Սույն հայտարարության տեքստը հաստատված է «Արմենիա» Միջազգային Օդանավակայաններ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ ԱՄՕ) Գլխավոր Մենեջերի հրամանով ձևավորված մրցույթի հանձնաժողովի կողմից և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի համաձայն:
2. Մրցույթի ծածկագիրը՝ ԱՄՕ-ԴԱՎՁ-02/19:
3. ԱՄՕ-ի գտնվելու վայրն է ք. Երևան 0042, Զվարթնոց Միջազգային Օդանավակայան, ԱՄՕ-ի շենք:
4. ԱՄՕ-ն հայտարարում է իր Գնումների Գործընթացի Կազմակերպման Կարգով սահմանված մրցույթի ընթացակարգ՝ ընկերության կարիքների համար վառելիքի ձեռքբերման նպատակով:
5. Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել համապատասխան գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):
6. Կնքվելիք Պայմանագրի կատարման պահանջվող ժամկետը պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պատշաճ կատարման ժամանակահատվածն է:
7. Ցանկացած իրավաբանական անձ, կարող է մասնակցել մրցույթին: Մրցույթին մասնակցելու իրավունքի սահմանափակումները «Գնումների մասին» ՀՀ օրենքի հիման վրա սահմանված են ԱՄՕ-ի Գնումների գործընթացի կազմակերպման կարգով: Հնարավոր մասնակիցները կարող են մրցույթի նախնական հայտ (Մասնակցությունը գրանցելու համար) ներկայացնել սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը:
8. Մրցույթի հրավեր ստանալու համար մասնակիցը կարող է դիմել ԱՄՕ-ին: Մրցույթի հրավերի ապահովման ժամկետն է Հունվարի 15–ը: Մրցույթի հրավերում նշված կլինեն վերաբերելի բոլոր մանրամասները: Մրցույթի հրավերը հրապարակված կլինի նաև ԱՄՕ ինտերնետային կայքի «Նորություններ» բաժնում: ԱՄՕ-ի ինտերնետային կայքի հասցեն է www.zvartnots.aero :
9. Հայտերը ներկայացվում են հայերեն լեզվով:
10. Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:
11. Մրցույթի անցկացման, հայտերի ներկայացման, հաղթողին որոշելու, ինչպես նաև մրցույթի ընթացակարգին վերաբերվող այլ գործընթացները նկարագրված են ԱՄՕ-ի գնումների գործընթացի իրականացման կարգում և հրավերում:
12. Մրցույթի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան 0042, Զվարթնոց Միջազգային Օդանավակայան, ԱՄՕ-ի շենք հասցեում գտնվող, ԱՄՕ-ի Գնումների բաժին:
13. Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել 010 49-30-00 ներք. 7205 հեռախոսահամարով:
14. Մրցույթի ընթացակարգի վերաբերյալ բողոքները ներկայացվում են Գնումների աջակցման կենտրոն ք. Երևան, Կոմիտասի 54/բ հասցեով:

«Արմենիա» Միջազգային Օդանավակայաններ» ՓԲԸ